Հավելված

Համայնքի ավագանու 2025թ.

մարտի 28-ի N55 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կարգով սահմանվում են համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման նպատակով բյուջեի համապատասխան հոդվածներից տրամադրվող սոցիալ- վերականգնողական օգնություն՝ դրամական հատուցմամբ, համայնքի բնակչի բուժման ծախսերի և հրատապ վիրահատության, ուսման ծախսերի վճարման նպատակով:

Սույն կարգով առաջարկվում է.

Ա. Բնաիրային օգնություն՝ դրամական հատուցմամբ՝ սննդի, դեղորայքի , հագուստի, կենցաղային անհրաժեշտ իրերի ձեռք բերման, բնակարանային կոմունալ ծառայությունների վճարումների նվազեցմանը կամ հատուցման, վառելանյութ ձեռք բերելու համար կամ սննդի քարտերի տեսքով հետևյալ խմբերին պատկանող անձանց ընտանիքներին:

Բ. Ուսման վարձավճարների հատուցում:

Շահառու կարող են լինել հետևյալ թիրախային խմբերը.

Ընտանիքում խնամառու (անչափահաս, հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ ունեցող, 75 և ավելի տարեկան), կամ ոչ աշխատունակ ածանց և աշխատունակների հարաբերակցության բարձր ցուցանիշի առկայություն ունեցող անձանց:

Միայնակ կամ անժառանգ տարեցներին

Հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող անձանց,

Հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձանց

Ծնողազուրկ կամ միակողմանի ծնողազուրկ երեխաներին,

Միայնակ մոր երեխաներին

Փախստական կամ տեղահավաած ընտանիքներին

Դրամական հատուցումը տրամադրվում է կազմակերպություններին՝ դրանց կողմից մատուցված ծառայությունների ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով դրամական փոխանցումների միջոցով:

Դրա անհնարինության դեպքում դրամական հատուցման համար դիմած կամ ստացած անձը հիմնավորում է հատուցման հանգամանքը համապատասխան անդորրագրերով: »

Հատուցումը տրամադրվում է բնակչի դիմումի համաձայն՝ հիմք ընդունելով սոցիալական աշխատողի կողմից կարիքի գնահատման արդյունքները և ներկայացված համապատասխան անդորրագիրը:

Ուսման վարձավճարների հատուցման չափը սահմանել առավելագույնը 50000 ՀՀ դրամ:

Բնաիրային հատուցման չափը , սոցիալ-վերականգնողական հատուցման չափը սահմանել առավելագույնը համայնքի բնակչի բուժման ծախսերի նպատակով սահմանել առավելագույնը 100000 ՀՀ դրամ, համայնքի բնակչի հրատապ վիրահատության նպատակով հատուցման չափը սահմանել մինչև 200 000 ՀՀ դրամ:

Սոցիալապես անապահով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի բնաիրային աջակցությունը կազմակերպել սննդային քարտերի միջոցով:Աջակցությունը սահմանել առավելագույնը 50000 ՀՀԴ:

Անձը կարող է օգտվել սոցիալ-վերականգնողական ծառայության դիմաց հատուցումից, եթե հաշվառված չէ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կամ եթե հաշվառված է, սակայն չի օգտվում պետության կողմից սահմանված սոցիալ-վերականգնողական վճարման արտոնություններից: Հատուցումը տրամադրվում է բնակչի դիմումի համաձայն՝ հիմք ընդունելով սոցիալական աշխատողի կողմից կարիքի գնահատման արդյունքները և ներկայացված համապատասխան փաստաթուղթը:

Դրամական հատուցումը կարող է տրամադրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի կարիքի գնահատման հիման վրա անգամ: